# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 5

## ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻՆ ՍՏԵՂԾՎԱԾ ՄԱՍՆԱԿԱՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ՝ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՆԻՍՏԻ

Քաղաք՝ Իջևան
Ամսաթիվ՝ 21.10.2025թ.
Ժամը՝ 15.00
Վայրը՝ Իջևանի համայնքապետարան

**Մասնակցում էին՝**
**Հանձնաժողովի նախագահ՝ Հրանտ Ներսեսյան** /Իջևանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար
**Հանձնաժողովի նախագահի տեղակալ՝** /Իջևանի համայնքապետարանի զարգացման ծրագրերի, տուրիզմի, առևտրի, սպասարկման և գովազդի բաժնի պետ
**Հանձնաժողովի քարտուղար՝** Լիլիթ Սարիբեկյան /Իջևանի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ

**Հանձնաժողովի անդամներ՝**
1. Արտակ Չոբանյան- Ազատամուտ բնակավայրի վարչական ղեկավար /հանձնաժողովի անդամ
2. Հակոբ Սարիբեկյան - Դիտավան բնակավայրի վարչական ղեկավար /հանձնաժողովի անդամ
3. Արսեն Հովակիմյան - Իջևանի համայնքապետարանի կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության, սոցիալական աջակցության և առողջապահության բաժնի առաջատար մասնագետ / հանձնաժողովի անդամ
4. Արամ Սիմոնյան - Իջևանի համայնքապետարանի սոցիալական կայքերի վարման և լրատվության պատասխանատու / հանձնաժողովի անդամ
5. Աղավնի Օրդինյան - Իջևանի համայնքապետարանի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսություն և բնապահպանության բաժնի առաջատար մասնագետ / հանձնաժողովի անդամ
6. Սեյրան Սարիբեկյան - Սարիգյուղ բնակավայրի վարչական ղեկավար / հանձնաժողովի անդամ

7. Արմեն Սայադյան - Իջևանի համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ /հանձնաժողովի անդամ

8. Փառանձեմ Ադամյան - Իջևանի համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի 1-ին կարգի մասնագետ /հանձնաժողովի անդամ

9. Աննա Օհանյան-Իջևանի համայնքապետարանի կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության, սոցիալական աջակցության և առողջապահության բաժնի 1-ին կարգի մասնագետ / հանձնաժողովի անդամ

10. Լիանա Ծովանյան–Իջևանի համայնքապետարանի քարտուղարության, անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների առաջատար մասնագետ /հանձնաժողովի անդամ

**Օրակարգ**

Իջևան համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթացի շրջանակներում չափորոշիչներին համապատասխանող առաջարկ-ծրագրերի քվեարկության արդյունքների ամփոփում:

Լսեցին.

1. Հանձնաժողովի նախագահ Հրանտ Ներսեսյանին.

Նա արձանագրեց, որ Իջևան համայնքի ղեկավարի 21.07.2025թ. հաստատված մասնակցային բյուջետավորման գործընթացի իրականացման պլան-ժամանակացույցի համաձայն՝ առաջարկ-նախագծերի քվեարկությունն ավարտվել է:

2. Հանձնաժողովի քարտուղար Լիլիթ Սարիբեկյանին.

Նա ներկայացրեց քվեարկության դրված առաջարկ-ծրագրերի հավաքած միավորները՝ առավելագույն թվից նվազման կարգով.

1. Մյասնիկյան փողոցի վերանորոգում-2123 հավանում
2. «Աճարկուտի մշակութային պատկերը»-1971 հավանում
3. Մանկության գունավոր ճանապարհը-535 հավանում
4. Ճոճվող կամրջի վերականգնում-417 հավանում
5. Ռ. Խոջումյան փողոցի ասֆալտապատում-242 հավանում

Հանձնաժողովը որոշեց.

1. Հաղթող ճանաչել՝ «Մյասնիկյան փողոցի վերանորոգում» ծրագիրը 6-7մլն դրամ նախնական արժեքով:

2. Առաջարկել համայնքի ղեկավարին հանձնարարելու համապատասխան բաժիններին՝ սկսել հաղթող ծրագրի իրականացման գործընթացը:

**Հանձնաժողովի նախագահ՝** _____ Հրանտ Ներսեսյան

**Հանձնաժողովի քարտուղար՝** _____ Լիլիթ Սարիբեկյան